

Ինչպես լուսարանել ներառական կրթությունը

Ինչ ասել է ներառական կրթություն

Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է որևէ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ առանձնահատուկ կրթական կարիքներ ունեցող անձանց համար:

Ներառական կրթությունը հանրակրթության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար, երեխաների ամենատարբեր կարիքների բավարարմանն ուղղված բոլոր տեսակի միջոցների ապահովում, ինչը հանրակրթական դպրոց մտնելու այցեքարտ է ընձեռում հատուկ կարիքներ ունեցող երեխաներին:

Հիմնական սկզբունքները, որոնք պետք է հաշվի առնել ցանկացած միջավայրում`

- երեխաները հաճախում են բնակության վայրին մոտ գտնվող մանկապարտեզ և դպրոց,
- մեթոդիկան այնպիսին է, որ նպաստում է տարբեր հնարավորություններ ունեցող երեխաների ուսուցմանը,
- բոլոր երեխաները մասնակցում են բոլոր դպրոցական միջոցառումներին` մրցույթներ, ցերեկույթներ, էքսկուրսիաներ և այլն,
- ներառական կրթության զարգացմանն օժանդակում են ուսուցիչները, ծնողները, առհասարակ, բոլոր նրանք, ում միջամտությունը կարող է այս կամ այն կերպ օգտակար լինել,
- ներառական կրթությունն օգնում է կանխելու խտրականությունը երեխաների նկատմամբ` սատարելով նրանց բոլորին` թե՛ հատուկ կարիքներ ունեցողներին և թե՛ չունեցողներին, իրենց` հասարակության լիիրավ անդամ լինելու գործում:

Առաջարկներ ՁԼՄ-ներին ներառական կրթությունը լուսաբանելիս

- Թեմային անդրադառնալիս հարցազրույց վարեք հաշմանդամություն ունեցող երեխաների, նրանց ծնողների հետ:
- Տույց տվեք ներառական դպրոցներում սովորողների դրական օրինակներ՝ ներկայացնելով երեխաների թեկուզ աննշան, բայց շատ կարևոր հաջողությունները:
- Մի՛ կենտրոնացեք աշակերտի ֆիզիկական խնդրի կամ հաշմանդամության վրա, այլ խոսեք կրթության մեջ նրա ունեցած կարիքի, այն պայմանների մասին, որոնք նրան անհրաժեշտ են կրթություն ստանալու համար:
- Կենտրոնացե՛ք միայն մեկ թեմայի վրա. կրթությունից անցում մի՛ կատարեք ընտանիքի սոցիալական վիճակին կամ երեխայի առողջական խնդիրներին:
- Տույց տվեք դպրոցի փորձը միջավայրի հարմարեցման, մատչելի շենքային և այլ պայմանների ստեղծման հարցում:
- Երեխաներին պատկերեք իրենց միջավայրում, դասարանում, դասամիջոցին կամ դպրոցական միջոցառումների ժամանակ:
- Խոսեք մանկավարժների և ուսուցիչների հետ, հնարավորություն տվեք նրանց ներկայացնելու իրենց դժվարությունները, բայց և խրախուսեք, որ խոսեն ձեռքբերումների մասին:
- Հատուկ ուշադրություն դարձրեք ձեր հերոսի դասընկերներին, սակայն նրանց վերաբերմունքն իմանալու համար ուղիղ հարցեր մի՛ տվեք նրանց:
- Հղումներ կատարեք օրենքներին և կոնվենցիաներին («Կրթության մասին» ՀՀ օրենք, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա):
- Պատմեք ներառական կրթության միջազգային փորձի մասին:
- Կրթությանն անդրադառնալիս շեշտը մի՛ դրեք միայն գիտելիքի վրա: Դպրոցը մարդուն տալիս է ավելին:
- Խոսեք այն հնարավորությունների մասին, որոնք մարդը կունենա ներառական դպրոցն ավարտելուց հետո:

- Խոսք ներառական կրթության ոլորտում պետության պատասխանատվության, վարած քաղաքականության և ստանձնած պարտավորությունների մասին:
- Անդրադարձե՞ք դրական ազդեցություններին, որոնք ունենում է ներառական կրթությունը մյուս երեխաների, ծնողների, ուսուցիչների, հասարակության վրա:
- Գործնական տեղեկություններ հաղորդեք դպրոցների, դրանց գտնվելու վայրի, ընդունելության կարգի մասին:
- Ներառական կրթությունը ներկայացրեք որպես կրթության իրավունքի իրացում, որպես հասարակության լիարժեք անդամ դառնալու հնարավորություն:

Չարուհի Բաթոյան
«Հույսի կամուրջ» ՀԿ